ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԳԿ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.02.2019թ. ժամը 15-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Մ.Անտոնյանը, Լ.Հովհաննիսյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ելնելով էլեկտրոնային աճուրդի համակարգի առանձնահատկություններից, որ հակադարձ աճուրդից հետո գնի փոփոխություն չի կարող կատարվել համակարգում, ուստի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ չեն կարող վարվել, և այն, որ հակադարձ աճուրդի արդյունքում պետք է լինի միակ նվազագույն գին տված մասնակից առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու համար, իսկ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար Ֆոտոն ՍՊԸ-ի և Սեմանգ ՍՊԸ-ի, 3-րդ չափաբաժնի համար Օլանդա ՍՊԸ-ի, Ֆոտոն ՍՊԸ-ի և Սեմանգ ՍՊԸ-ի առաջարկած գները հավասար են՝ ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած :
2. Հաստատել ընթացակարգի 1 և 3 չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):
3. Ընթացակարգի **առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝**
   2-րդ չափաբաժնի համար **«ԶԵԹ-ՊՐՈՖԻԼ» ՍՊԸ-ին,**
   4-րդ չափաբաժնի համար **<< Ֆոտոն>> ՍՊԸ-ին,**
   5-րդ չափաբաժնի համար **<<Օլանդա>> ՍՊԸ-ին:**
4. Ընթացակարգի **երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝**
   4-րդ չափաբաժնի համար **<<Օլանդա>> ՍՊԸ-ին:**

5. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 22-րդ կետի համաձայն՝ ժամը 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ.Անտոնյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան